Գեղարոտ

Մակերես՝ 14.8կմ^2

Բնակչություն՝ 547

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Սպիտակ քաղաքից մոտ 15 կմ հարավ, Երեւան-Սպիտակ մայրուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 50 կմ հեռավորության վրա: Նախկինում մտել է Երեւանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Ունեցել է Քեշիշքյանդ, Քեշիշքենդ անվանումները: Գեղարոտ է վերանավանվել 1935 թ-ին:
Գյուղի մոտ հայտնաբերվել են հին բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջանի դամբարաններ:
Ընկած է ծովի մակարդակից 2060 մ բարձրության վրա, թեք սարավանդի վրա: Կլիման ցուրտ լեռնային է, առողջարար: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6 - -8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:
Բնակչության նախնիների մեծ մասը գաղթել է Արեւմտյան Հայաստանից: 1873 թ-ին գյուղն ունեցել է 218, 1926 թ-ին՝ 604, 1939 թ-ին՝ 768, 1979 թ-ին՝ 482 հայ բնակիչ:Համայնքի բնակչությունը կազմում է 589 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 33%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 60%, հետաշխատունակները՝ 7%: Գյուղն ունի 144 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են հիմնականում որպես վարելահողեր, որտեղ զբաղվում են հացահատիկի, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողերում կան բազմամյա տնկարկներ, մշակում են պտուղներ:
Պահուստային հողերը օգտագործվում են որպես վարելահողեր եւ արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 55 հա և 171 հա:
Զբաղվում են հիմնականում մանր եւ խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների, խմելու ջրի ջրագծերի վերանորոգումը: